# «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ
# 2017Թ. ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ
# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**ՀՀ, ք. Երևան, Ռադիսոն Բլու հյուրանոց, «Արմենիա» դահլիճ**
**չորեքշաբթի, 20 հունիսի 2018թ., 12:40**

Մասնակցեցին՝
**Բաժնետերեր**
31 բաժնետեր նիստի բացման պահին

**Բանկի Խորհուրդ**
Գագիկ Զաքարյան (նախագահ)

Խորհրդի նախագահի խորհրդական Վարդան Աթայան

**Բանկի Վարչություն**
Մեսրոպ Հակոբյան (նախագահ)
Արարատ Ղուկասյան
Գոհար Գրիգորյան
Օվսաննա Առաքելյան
Դավիթ Պետրոսյան
Գուրգեն Ղուկասյան
Տիգրան Բաղանյան

**Հրավիրվածներ**
ՀՀ կենտրոնական բանկի ներկայացուցիչներ
«Գրանթ Թորնթոն» աուդիտորական ընկերության ներկայացուցիչներ
Հայաստանի Բանկերի Միության նախագահ Հակոբ Անդրեասյան
Հայաստանի Բանկերի Միության գործադիր տնօրեն Սեյրան Սարգսյան
Միջազգային և հայաստանյան կազմակերպությունների ներկայացուցիչներ
Բանկի կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների ղեկավարներ

**Ժողովի նախագահ Գագիկ Զաքարյանը** բացեց նիստը ժամը 12:40-ին և ողջունեց բոլոր բաժնետերերին և հյուրերին, ժողովի քարտուղար նշանակեց **Աննա Բաղդոյանին**՝ Հաշվիչ հանձնաժողովի նախագահին:

**Աննա Բաղդոյանը** ներկայացրեց, որ 20.06.2018թ. «Յունիբանկ» ԲԲԸ Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի քվեարկությունն իրականացվել է քվեաթերթիկների միջոցով: Տարեկան ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցանկը կազմված է 2018թ. մայիսի 05 դրությամբ:
Ժողովի գումարման հայտարարությունը պատշաճ կերպով հրապարակվել էր «Ժողովուրդ» օրաթերթում, ծանուցումները քվեարքերթիկների հետ միասին ուղարկվել էին բաժնետերերին փոստի միջոցով:
Ժողովի օրակարգի հարցերի վերաբերյալ լրացված քվեաթերթիկների ընդունումն ավարտվել է 24.06.2018թ., ժամը 12:40՝ մինչև ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահը: Հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը կազմվել է 20.06.2018թ.:

Բանկի քվեարկող տեղաբաշխված բաժնետոմսերի գումարային ձայների քանակը կազմեց 172,886,525 հատ, որից քվեարկությանը մասնակցել են 170,014,472 ձայնի իրավունք ունեցող բաժնետոմսեր, կամ տոկոսային հարաբերությամբ 98.34%-ը:

Քվորումն ապահովված է:

**Ժողովի նախագահ Գագիկ Զաքարյանը** Բանկի ձեռքբերումների շարքում առանձնացրեց ակտիվների ռեկորդային աճը մինչև 200 մլրդ ՀՀ դրամ, ակտիվների որակի բարելավումը և Moody's միջազգային գործակալության կողմից Բանկի վարկանիշը մինչև B2 մակարդակի բարձրացումը՝ կայուն կանխատեսմամբ: Նշեց Բանկի գործունեության հիմնական ուղղություններով աճի բարձր տեմպի ապահովման մասին, վստահություն հայտնեց, որ Յունիբանկը կշարունակի իր ակտիվ ինովացիոն զարգացումը՝ որպես հաճախորդամետ բանկ: Ներկայացրեց բանկի ղեկավար կազմում տեղի ունեցած փոփոխությունները՝ Վարչության նախագահի պաշտոնին Մեսրոպ Հակոբյանի և Խորհրդի նախագահի խորհրդականի պաշտոնին Վարդան Աթայանի փոխադրումը:

Բանկի ղեկավարության անունից **Գագիկ Զաքարյանը** երախտագիտություն հայտնեց բաժնետերերին և հաճախորդներին վստահության և լոյալության, Բանկի անձնակազմին՝ համատեղ աշխատանքի համար: Հատուկ շնորհակալություն հայտնեց կենտրոնական բանկին և Հայաստանի Բանկերի Միությանը ցուցաբերած աջակցության համար:

**Ժողովի նախագահը** խոսքը փոխանցեց Վարչության նախագահ Մեսրոպ Հակոբյանին՝ 2017թ. կատարված աշխատանքների մասին հաշվետվություն ներկայացնելու համար:

**Հարց 1. Յունիբանկ» ԲԲԸ 2017թ. գործունեության վերաբերյալ Վարչության տարեկան հաշվետվության հաստատում:**

**Վարչության նախագահ-գործադիր տնօրեն Մեսրոպ Հակոբյանը** ներկայացրեց «Յունիբանկ» ԲԲԸ 2017թ. գործունեության վերաբերյալ Վարչության տարեկան հաշվետվությունը: Նշեց, որ հաշվետու տարում Յունիբանկի գործունեությունը նպատակաուղղված էր Բանկի ֆինանսական կայունության և ներդրումային գրավչության բարձրացմանը, ինչպես նաև ակտիվների որակի բարելավմանը: Հիմնական խնդիրները ներառում էին նաև կազմակերպչական կառուցվածքի արդյունավետության բարձրացումը, բանկային ռիսկերի կառավարման համակարգի կատարելագործումը, համապատասխանության ապահովման գործառույթի զարգացումը, հաճախորդների սպասարկման որակի բարելավումը: Ներկայացրեց նաև հաստատված ռազմավարության շրջանակներում 2018թ. առանցքային առաջնահերթությունները:

Ամփոփելով՝ **Մեսրոպ Հակոբյանը** երախտագիտություն հայտնեց բաժնետերերին, Խորհրդի անդամներին, գործընկերներին և հաճախորդներին վստահության և համագործակցության համար և վստահեցրեց, որ Յունիբանկը կգործադրի բոլոր ջանքերը վերջիններիս ակնկալիքներն առավելագույնս բավարարելու համար:

**Մեսրոպ Հակոբյանը** դիմեց մասնակիցներին ներկայացնելու իրենց հետաքրքրող հարցերը:
Հարցեր չներկայացվեցին:

Բաժնետերերի ժողովը հաստատեց «Յունիբանկ» ԲԲԸ 2017թ. գործունեության վերաբերյալ Վարչության հաշվետվությունը քվեարկության հետևյալ արդյունքներով՝

**կողմ՝** 170.014.472 ձայն կամ մասնակիցների ձայների 100%
**դեմ՝** 0 ձայն
**ձեռնպահ՝** 0 ձայն
**անվավեր՝** 0 ձայն

**Հարց 2. «Յունիբանկ» ԲԲԸ 2017թ. ֆինանսական հաշվետվությունների հաստատում: «Յունիբանկ» ԲԲԸ 2017թ. ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ «Գրանթ Թորնթոն» աուդիտորական ընկերության եզրակացության ներկայացում:**

**Վարչության անդամ, Ֆինանսական տնօրեն - գլխավոր հաշվապահ Գոհար Գրիգորյանը** ներկայացրեց Խորհրդի նախնական հաստատմանն արժանացած Բանկի 2017 թվականի տարեկան հաշվետվությունները՝ հետևյալ հիմնական ցուցանիշներով.

1. ակտիվներ 202,721,471 հազ. ՀՀ դրամ
2. պարտավորություններ 167,360,118 հազ. ՀՀ դրամ
3. կապիտալ 35,361,353 հազ. ՀՀ դրամ
4. տոկոսային եկամուտներ 22,296,742 հազ. ՀՀ դրամ
5. տոկոսային ծախսեր (11,805,386) հազ. ՀՀ դրամ
6. այլ եկամուտներ (1,416,262) հազ. ՀՀ դրամ
7. շահույթ/վնաս 67,602 հազ. ՀՀ դրամ

2017թ. ընթացքում «Յունիբանկ» ԲԲԸ դրամական հոսքերը բաղկացած են՝

1. դրամական հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխություններ՝ 7,524,712 հազ. ՀՀ դրամ,

2. գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր՝ (8,833,244) հազ. ՀՀ դրամ
3. դրամական զուտ հոսքեր ներդրումային գործունեությունից՝ (7,682,140) հազ. ՀՀ դրամ
4. զուտ դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից՝ 14,104,012 հազ. ՀՀ դրամ
5. դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ՝ (2,411,372) հազ. ՀՀ դրամ
6. արտարժույթի փոխանակման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա՝ 707,690 հազ. ՀՀ դրամ
7. դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ՝ 33,547,636 հազ. ՀՀ դրամ
8. դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջի դրությամբ՝ 31,843,954 հազ. ՀՀ դրամ:

**Գոհար Գրիգորյանը** ներկայացրեց «Յունիբանկ» ԲԲԸ 2017թ. ֆինանսական հաշվետվությունները հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին համապատասխանելու վերաբերյալ «Գրանթ Թորնթոն» անկախ աուդիտորական ընկերության եզրակացությունը, համաձայն որի ֆինանսական հաշվետվություններ արտացոլում են «Յունիբանկ» ԲԲԸ 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը:

**Գոհար Գրիգորյանը** դիմեց մասնակիցներին ներկայացնելու իրենց հետաքրքրող հարցերը:
Հարցեր չներկայացվեցին:

Բաժնետերերի ժողովը <u>հաստատեց</u> «Յունիբանկ» ԲԲԸ 2017թ. ֆինանսական հաշվետվությունները քվեարկության հետևյալ արդյունքներով՝

**կողմ**՝ 170.014.472 ձայն կամ մասնակիցների ձայների 100%
**դեմ**՝ 0 ձայն
**ձեռնպահ**՝ 0 ձայն
**անվավեր**՝ 0 ձայն

**Հարց 3. «Յունիբանկ» ԲԲԸ 2017թ. Ներքին աուդիտի հաշվետվության հաստատում: Բանկի ներքին հսկողության համակարգի վերաբերյալ Ներքին աուդիտի եզրակացության ներկայացում:**

Ներքին աուդիտի տնօրեն Հայկ Սուվարյանի հարգելի պատճառով բացակայության հետ կապված Ներքին աուդիտի տարեկան հաշվետվությունը ներկայացրեց **Ներքին աուդիտի տնօրենի տեղակալ Արթուր Ղուկասովը**: Ներկայացրեց տարեկան ըստ աշխատանքային պլանի անցկացված և արտապլանային աուդիտորական ստուգումների ոլորտները: Արձանագրված խնդիրների (թվով 85 տեղային խնդիր, թվով 23 համակարգային խնդիր) լուծման նպատակով կազմվել են միջոցառումների ծրագրեր՝ պատասխանատու ստորաբաժանումների/աշխատակիցների և ժամկետների սահմանմամբ, խախտումների վերացման նկատմամբ իրականացվել է հետևողական հսկողություն:
Ներքին աուդիտի եզրակացությամբ, Բանկի ներքին հսկողության համակարգը համապատասխանում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին:

**Արթուր Ղուկասովը** դիմեց մասնակիցներին ներկայացնելու իրենց հետաքրքրող հարցերը:
Հարցեր չներկայացվեցին:

Բաժնետերերի ժողովը <u>հաստատեց</u> «Յունիբանկ» ԲԲԸ 2017թ. Ներքին աուդիտի հաշվետվությունը քվեարկության հետևյալ արդյունքներով՝

**կողմ**՝ 170.014.472 ձայն կամ մասնակիցների ձայների 100%
**դեմ**՝ 0 ձայն
**ձեռնպահ**՝ 0 ձայն
**անվավեր**՝ 0 ձայն

**Հարց 4. «Յունիբանկ» ԲԲԸ Խորհրդի անդամների ընտրություն և քանակական կազմի հաստատում:**

**Ժողովի նախագահ Գագիկ Զաքարյանը** ներկայացրեց Խորհրդի անդամների ընտրության վերաբերյալ Խորհրդի հետևյալ առաջարկությունները՝
- վերընտրել Խորհրդի անդամներ Գագիկ Զաքարյանին, Գեորգի Պիսկովին, Էդուարդ Զամանյանին, Հրահատ Արզումանյանին, Դավիթ Փափազյանին,
- Խորհրդի կազմում ընդգրկել Վարդան Աթայանին և Արտեմ Կոնստանդյանին,
- հաստատել Խորհուրդը հետևյալ կազմով՝ Գագիկ Զաքարյան, Գեորգի Պիսկով, Էդուարդ Զամանյան, Հրահատ Արզումանյան, Դավիթ Փափազյան, Վարդան Աթայան, Արտեմ Կոնստանդյան,
- Խորհրդի քանակական կազմը հաստատել 7 (յոթ) հոգի:

**Գագիկ Զաքարյան, Գեորգի Պիսկով**՝ «Յունիբանկ» ԲԲԸ բաժնետեր «Uniholding GG Limited» ընկերության լիազոր ներկայացուցիչներ (սովորական անվանական բաժնետոմսերի քանակը՝ 147,805,227 հատ, արտոնյալ հաստատագրված բաժնետոմսերի քանակը՝ 32,010,000 հատ)
**Էդուարդ Զամանյան**՝ Բանկի բաժնետեր չի հանդիսանում
**Հրահատ Արզումանյան** ՝ Բանկի բաժնետեր չի հանդիսանում
**Դավիթ Փափազյան**՝ Բանկի բաժնետեր չի հանդիսանում
**Վարդան Աթայան՝** Բանկի բաժնետեր (սովորական անվանական բաժնետոմսերի քանակը՝ 5,483 հատ)
**Արտեմ Կոնստանդյան՝** Բանկի բաժնետեր չի հանդիսանում

Քվեարկության արդյունքներով ձայները բաշխվել են հետևյալ կերպ՝
Գագիկ Զաքարյան՝ 24.288.313 ձայն
Գեորգի Պիսկով ՝ 24.288.816 ձայն
Էդուարդ Զամանյան `24.274.325 ձայն
Հրահատ Արզումանյան `24.274.322 ձայն
Դավիթ Փափազյան ՝ 24.274.321 ձայն
Վարդան Աթայան՝ 24.280.207 ձայն
Արտեմ Կոնստանդյան՝ 24.274.327 ձայն
**Դեմ բոլոր թեկնածուներին**՝ 0 ձայն
**Ձեռնպահ**՝ 0 ձայն
**Անվավեր**՝ 59.841 ձայն

**Գագիկ Զաքարյանը** դիմեց մասնակիցներին ներկայացնելու իրենց հետաքրքրող հարցերը:
Հարցեր չներկայացվեցին:

Բաժնետերերի ժողովը որոշում ընդունեց վերընտրել Խորհրդի անդամներ Գագիկ Զաքարյանին, Գեորգի Պիսկովին, Էդուարդ Զամանյանին, Հրահատ Արզումանյանին, Դավիթ Փափազյանին, Խորհրդի կազմում ընդգրկել Վարդան Աթայանին և Արտեմ Կոնստանդյանին (02.07.2018թ-ից), հաստատել Խորհուրդը հետևյալ կազմով՝ Գագիկ Զաքարյան, Գեորգի Պիսկով, Էդուարդ Զամանյան, Հրահատ Արզումանյան, Դավիթ Փափազյան, Վարդան Աթայան, Արտեմ Կոնստանդյան, Խորհրդի քանակական կազմը հաստատել 7 (յոթ) հոգի:

**Հարց 5. «Յունիբանկ» ԲԲԸ 2017թ. ֆինանսական արդյունքներով տարեկան շահութաբաժինների վճարման որոշման ընդունում:**

***Ժողովի նախագահ* Գագիկ Զաքարյանը** ներկայացրեց, որ հաշվի առնելով Բանկի 2017թ. ֆինանսական գործունեության արդյունքները, Խորհրդի 03.05.2018թ. որոշմամբ առաջարկվում է սովորական անվանական բաժնետոմսերի գծով տարեկան շահութաբաժիններ չվճարել, ըստ ՀՀՄՍ 67.602 հազ. ՀՀ դրամի չափով զուտ շահույթն ուղղել Բանկի հեռանկարային զարգացմանը, գլխավոր պահուստին հատկացնել 5%:

**Գագիկ Զաքարյանը** դիմեց մասնակիցներին ներկայացնելու իրենց հետաքրքրող հարցերը:
Հարցեր չներկայացվեցին:

Բաժնետերերի ժողովը, քվեարկության հետևյալ արդյունքներով, որոշում կայացրեց սովորական անվանական բաժնետոմսերի գծով տարեկան շահութաբաժիններ չվճարել, ըստ ՀՀՄՍ 67.602 հազ. ՀՀ դրամի չափով զուտ շահույթն ուղղել Բանկի հեռանկարային զարգացմանը, գլխավոր պահուստին հատկացնել 5%՝

**կողմ**՝ 170.014.472 ձայն կամ մասնակիցների ձայների 100%
**դեմ**՝ 0 ձայն
**ձեռնպահ**՝ 0 ձայն
**անվավեր**՝ 0 ձայն

**Հարց 6. «Յունիբանկ» ԲԲԸ 2018թ. ֆինանսական գործունեության արտաքին աուդիտն անցկացնող անձի հաստատում:**

**Վարչության անդամ, Ֆինանսական տնօրեն - Գլխավոր հաշվապահ Գոհար Գրիգորյանը** ներկայացրեց, որ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան 2018 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնող անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության նպատակով Բանկի կողմից հայտարարվել էր մրցույթ, որին մասնակցության հայտ էր ներկայացրել «Գրանթ Թորնթոն» ՓԲ ընկերությունը:
Մրցութային հանձնաժողովի՝ Բանկի Վարչության կողմից մրցույթն անցկացվել և արդյունքներն ամփոփվել են ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի կողմից անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության կարգով և Բանկի ներքին իրավական ակտով սահմանված պահանջներին համապատասխան: Մրցութային հանձնաժողովի որոշմամբ մրցութային առաջարկի գնահատման արդյունքների հիման վրա հաղթող է ճանաչվել «Գրանթ Թորնթոն» ՓԲ ընկերությունը: 03.05.2018թ. Խորհրդի որոշմամբ որպես Բանկի 2018թ. արտաքին աուդիտն իրականացնող անձ Բանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի հաստատմանն է ներկայացվում «Գրանթ Թորնթոն» ՓԲ ընկերությունը:

**Գոհար Գրիգորյանը** դիմեց մասնակիցներին ներկայացնելու իրենց հետաքրքրող հարցերը:
Հարցեր չներկայացվեցին:

Բաժնետերերի ժողովը, քվեարկության հետևյալ արդյունքներով, որոշում ընդունեց հաստատել «Գրանթ Թորնթոն» ՓԲ ընկերությանը որպես Բանկի 2018թ. արտաքին աուդիտն իրականացնող անձ՝

**կողմ**՝ 170.014.472 ձայն կամ մասնակիցների ձայների 100%
**դեմ**՝ 0 ձայն
**ձեռնպահ**՝ 0 ձայն
**անվավեր**՝ 0 ձայն

**Հարցեր 7-9. «Յունիբանկ» ԲԲԸ կանոնադրությունում, ««Յունիբանկ» ԲԲԸ մասնակիցների ընդհանուր ժողովի նախապատրաստման և վարման կարգ», ««Յունիբանկ ԲԲԸ» Խորհրդի կանոնակարգ» ներքին իրավական ակտերում փոփոխությունների հաստատում:**

**Ժողովի քարտուղար Աննա Բաղդյանը** ներկայացրեց, որ 03.05.2018թ. Խորհրդի որոշմամբ առաջարկվում է փոփոխություններ կատարել «Յունիբանկ» ԲԲԸ կանոնադրությունում, ««Յունիբանկ» ԲԲԸ մասնակիցների ընդհանուր ժողովի նախապատրաստման և վարման կարգ» և ««Յունիբանկ ԲԲԸ» Խորհրդի կանոնակարգ» ներքին իրավական ակտերում: Փոփոխությունները պայմանավորված են ներքին իրավական ակտերը «Բանկերի և բանկային գործունեության մասին» և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքներին համապատասխանեցնելու, ինչպես նաև արտոնյալ բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի վերանայմամբ:

Ժողովի նախագահը դիմեց մասնակիցներին ներկայացնելու իրենց հետաքրքրող հարցերը:
Հարցեր չներկայացվեցին:

7, 8 և 9-րդ հարցերով ձայները բաշխվել են հետևյալ կերպ՝

**կողմ**՝ 170.009.704 ձայն կամ մասնակիցների ձայների 99.997%
**դեմ**՝ 0 ձայն
**ձեռնպահ**՝ 4.768 ձայն կամ մասնակիցների ձայների 0.003%
**անվավեր**՝ 0 ձայն

Բաժնետերերի ժողովը, քվեարկության հետևյալ արդյունքներով, որոշում ընդունեց՝

- հաստատել «Յունիբանկ» ԲԲԸ կանոնադրությունում փոփոխությունները, ներկայացնել գրանցման ՀՀ ԿԲ, համաձայն ՀՀ ԿԲ Կանոնակարգ 1-ով սահմանված պահանջների, սույնի հետ կապված հանձնարարել Բանկի Վարչության նախագահին կատարել համապատասխան գործողությունները: 2018թ. արտոնյալ հաստատագրված բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժնի չափը հաշվարկել տարեկան 12% տոկոսադրույքով՝ այդ բաժնետոմսերի անվանական արժեքի նկատմամբ:
- Հաստատել ««Յունիբանկ» ԲԲԸ մասնակիցների ընդհանուր ժողովի նախապատրաստման և վարման կարգ» ներքին իրավական ակտում փոփոխությունները և գործողության մեջ դնել, համաձայն կից հավելվածի:
- Հաստատել ««Յունիբանկ ԲԲԸ» Խորհրդի կանոնակարգ» ներքին իրավական ակտում փոփոխությունները և գործողության մեջ դնել, համաձայն կից հավելվածի:

Ժողովի քարտուղար **Աննա Բաղդյանը** հայտարարեց, որ Ժողովի օրակարգի բոլոր հարցերը քննարկված են, դրանց հետ կապված որոշումներն ընդունված են:

Ժողովի մասնակցի կողմից հարցեր տրվեցին Բանկի բաժնետոմսերի բորսային գնանշման ակտիվության և դոլարային ավանդների տոկոսադրույքների վերաբերյալ, որոնց Վարչության նախագահ Մեսրոպ Հակոբյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

Ժողովի ավարտին շնորհակալական խոսքով հանդես եկավ **Ջիվան Գասպարյանը**: Իր երախտագիտությունը հայտնեց Բանկի ղեկավարությանը տաղանդավոր ծնողազուրկ երեխաների համար դուդուկի դպրոցի բացմանն աջակցելու համար:

Բաժնետերերի ժողովն ավարտվեց ժամը 13:30-ին:

| | |
|---|---|
| **Գագիկ Զաքարյան**<br>**Նախագահ** | **Աննա Բաղդյան**<br>**Քարտուղար** |

ք. Երևան, 22 հունիսի 2018թ.